ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Սյունիքի մարզի գ. Դարբասի միջնակարգ, ՀՀ Շիրակի մարզի գ. Բերդաշենի միջնակարգ և ՀՀ Վայոց ձորի մարզի գ. Եղեգիսի դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի սեպտեմբերի 15-ին կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-2 գնման պայմանագրում 2021 թվականի օգոստոսի 11-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	ՀՀ կառավարության 06.05.2021թթ N741-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-2 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 և 8.13 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4
15.09.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-2 գնման պայմանագրի

ք. Երևան «11» 08 2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Վանի>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Ղ. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 06.05.2021թ. N 741-Ն որոշումը և ՀՀ Սյունիքի մարզի գ. Դարբասի միջնակարգ, ՀՀ Շիրակի մարզի գ. Բերդաշենի միջնակարգ և ՀՀ Վայոց ձորի մարզի գ. Եղեգիսի դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 15.09.2020թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-2 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1.1 Կողմերը որոշեցին հաստատել ՀՀ Վայոց ձորի մարզի գ. Եղեգիսի դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման 2021 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը և օրացուցային գրաֆիկը նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածների:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները բաղկացած են մեկական էջերից և համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Վանի>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Արին-Բերդի 2/1
կառավարական տուն 3	<<ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 2500010873120100
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00412375
Հ/Հ 900011023695, 900011035756, 900011035731	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Ղ. Գրիգորյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
15.09.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-2 գնման պայմանագրի
«11» 08 2021թ. կնքված N 4 համաձայնագրի

<<ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Վայոց Ձորի մարզի գ. Եղեգիսի դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման 2021թ. վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցով նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում կատարվելիք աշխատանքների

N	Գումար (ՀՀ դրամ)	Կատարվելիք աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը*
1	150 000 000	ոչ ուշ քան 60-րդ օրացուցային օր
2	352 435 906	ոչ ուշ քան 120 օրացուցային օր
Ընդամենը	**352 435 906**	**120 օրացուցային օր**

***Համաձայնագրով նախատեսված աշխատանքների սկիզբ է համարվում օբյեկտում ապաստարանի կառուցման նպատակով Պայմանագրում համապատասխան փոփոխություն կատարելու վերաբերյալ N3 համաձայնագրի կնքման հաջորդ օրը:>>:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023695, 900011035756, 900011035731
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝
_____ Ա. Մնրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Վանի>> ՍՊԸ
ք. Երևան, Արին-Բերդի 2/1
<<ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 2500010873120100
ՀՎՀՀ 00412375
Տնօրեն՝
_____ Ղ. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
15.09.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-2 գնման պայմանագրի
«11» 08 .2021 թ. կնքված N 4 համաձայնագրի

<<Հավելված N 2
15.09.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-2 գնման պայմանագրի
23.02.2021 թ. կնքված N 2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	հաշվեհամարը	անվանումը	Մինչև 2020 թ. վճարված գումարը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
					հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	45211231/11	900011023695	ՀՀ Սյունիքի մարզի գ. Դարբասի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքներ	72 443 300	-	-	-	29 421 600	29 421 600	29 421 600	40 770 900	40 770 900	40 770 900	50 000 000	50 000 000	50 000 000	50 000 000
3	45211231/13	900011035756	ՀՀ Շիրակի մարզի գ. Բերդաշենի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքներ	72 696 900	-	-	-	29 391 700	29 391 700	29 391 700	40 492 100	40 492 100	40 492 100	50 000 000	50 000 000	50 000 000	50 000 000

4	45211231/12	900011035731	ՀՀ Վայոց ձորի մարզի գ. Եղեգիսի դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքներ	71 534 900	-	-	19 095 100	74 627 200	74 627 200	74 627 200	155 666 500	228 404 353	228 404 353	352 435 906	352 435 906	352 435 906	352 435 906
ԸՆԴԱՄԵՆԸ				216 675 100	-	-	19 095 100	133 440 500	133 440 500	133 440 500	236 929 500	309 667 353	309 667 353	452 435 906	452 435 906	452 435 906	452 435 906

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողջական կարգով:>>:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023695, 900011035756, 900011035731
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝
_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Վանի>> ՍՊԸ
ք. Երևան, Արին-Բերդի 2/1
<<ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 2500010873120100
ՀՎՀՀ 00412375

Տնօրեն՝
_____ Ղ. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

«10» 08 2021 թ. N 2342/10/5

ԵՐԱՇԽԻՔ N 21-0174

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ՎԱՆԻ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-2» պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:
2. Երաշխիքով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 14,547,571 (տասնչորս միլիոն հինգ հարյուր քառասունյոթ հազար հինգ հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի թիվ 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքվելիք N «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-2» պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված ծառայություններն ամբողջ ծավալով մատուցելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը՝ ներառյալ երաշխիքային ժամկետը, բայց ոչ ուշ քան 30/06/2023 թվականը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-2» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.
2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա

ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյան

Գլխավոր հաշվապահ Սեդրակ Բաղդասարյան

ՓԲԸ "ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ" ZAO "ARMSWISSBANK" ARMSWISSBANK 02574955

«10» 08 2021 թ. N 2343/10/5

ԵՐԱՇԽԻՔ N 21-0173

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՎԱՆԻ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-2» պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):
2. Երաշխիքով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 43,642,712 (քառասուներեք միլիոն վեց հարյուր քառասուներկու հազար յոթ հարյուր տասներկու) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի թիվ 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-2» ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված աշխատանքներն ամբողջ ծավալով մատուցելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ ուշ քան 30/06/2022 թվականը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-2» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.
2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.
3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է

ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
   1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
   2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն Գևորգ Մաչանյան

Գլխավոր հաշվապահ Սեդրակ Բաղդասարյան

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ «АРМСВИСБАНК» ЗАО ARMSWISSBANK CJSC ARMSWISSBANK 02574955 Yerevan, Armenia